

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՐԻԶ

Սույն թվականի ապրիլի 4-ից մինչև 21-ը Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ոչ պաշտոնական այցով եղավ Փարիզում: Այս առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էր Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանը:

Ապրիլի 13-ին, Աշխարհամատրան կիրակի օրը, Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցում Վեհափառ Հայրապետը հոգեշեն քարոզ արտասանեց՝ ի մխիթարություն հայ հավատացյալների խուռներամ բազմության: Պատարագիչն էր Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանը:

Փարիզում կեցության օրերին Վեհափառ Հայրապետը բազմաթիվ հանդիպումներ և խորհրդակցություններ ունեցավ Փարիզի, Լիոնի, Մարսելի, Ժնևի, Լոնդոնի և Բրյուսելի հայ եկեղեցական պատվիրակությունների հետ:

Ապրիլի 22-ին Նորին Սրբությունը վերադարձավ Մայր Աթոռ: